Հավելված 2
2024թ. «02» «16»-ին
Կնքված N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-4/24 պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-4/24

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը՝** | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում. Ստեփանավան |
| **Դրամաշնորհի N** | N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-4/24 |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակատված** | 01.02.2024 – 31.12.2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.02.2024 – 31.12.2024 |
| **Ներկայացման օր** | 15.01.2025 |
| **Հաշվետվության պատասխանատու** | Տաթևիկ Ղազարյան<br>Ծրագրի համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

### 2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար

**Միջոցառում 1.** Շահառուների ընդունելության կազմակերպում բազմամասնագիտական թիմի կողմից, կարիքների բազմակողմանի գնահատում ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ:
**Միջոցառում 2**. Գնահատման արդյունքում սոցիալ-վերականգնողական անհատական և խմբային ծրագրերի կազմում:
**Միջոցառում 3**. Սոցիալ-հոգեբանական վերականգմանն ուղղված ծառայությունների տրամադրում:
**Միջոցառում 4**. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում:
**Միջոցառում 5.** Հանրային միջոցառումներ և ԶԼՄ լուսաբանում:
**Միջոցառում 6.** Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար:
**Միջոցառում 7.** Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ:
**Միջոցառում 8.** Շահառուների 7-օրյա ամառային հանգիստ «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում
**Միջոցառում 9.** Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:

2.2 **Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**

**Միջոցառում 1.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում և բազմամասնագիտական թիմի կողմից կարիքների բազմակողմանի գնահատում՝ ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ, որի արդյունքում իրականացվել է թվով **55** շահառուի կարիքների գնահատում: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 2**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից կազմվել է թվով **55** սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Գործողություն 2-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 3**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով **55** շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 4**. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտությունների զարգացնող խմբակներում: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են արտթերապևտիկ տարբեր խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 5**.

1. Փետրվարի 19-ին Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնում (Ստեփան Շահումյանի տուն-թանգարան) կայացավ գրքի տոնին նվիրված միջոցառում, որին ներկա էին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի շահառուները:
2. Ապրիլ 1-ին կենտրոնի շահառուները այցելել են Ստեփան Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն, մասնակցել Սուրբ Զատկի տոնին նվիրված միջոցառմանը և ծղոտագործության վարպետաց դասին: Միջոցառմանը ելույթ են ունեցել ԱՐԱՐ պարի խմբի սաները:
3. Ապրիլ 11-ին կենտրոնի շահառուները այցելել Ստեփանավանի Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատ, մասնակցել Մայրության տոնին նվիրված միջոցառմանը և ցուցահանդեսին, միջոցառմանը ելույթ է ունեցել "ԱՆԻ" պարային խումբը:
4. Հուլիսի 27-ին կենտրոնի թվով 24 շահառուներ այցելել են Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնում կազմակերպված ցուցահանդեսին, որտեղ ելույթ են ունենեցել «Arar» երգի ու պարի խումբը: Երեխաները մասնակցել են ազգագրական պարի վարպետաց դասին:
5. Դեկտեմբերի 3-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կենտրոնում կազմակերպվել է կենտրոնի շահառուների ձեռքի աշխատանքների բաց ցուցադրություն, այն ուղեկցվել է հյուրասիրությամբ և շնորհակալագրերով: Կենտրոնի շահառուների և իրենց ընտանիքի անդամների համար կազմակերպվել է նաև կավագործության վարպետաց դաս:
6. Նոյեմբերի 5-ին կենտրոնի թվով 15 շահառուներ այցելել են Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն և ներկա գտնվել հայ ժողովրդական նկարիչ՝ Անտուան Ավետյանի ցուցահանդեսին:

**Միջոցառում 6.** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի շահառուների և նրանց ընտանիքի անդամների համար կազմակերպվել են հետևյալ սեմինարները՝

1. Թեմա՝ «Երեխայի ուժեղ և թույլ կողմերի բացահայտում», վարող հատուկ մանկավարժ՝ Վերոնիկա Հարությունյան:
2. Թեմա՝ «Վախերի հաղթահարումը արտթերապիայի միջոցով», վարող արտթերապիստ՝ Անահիտ Վահրադյան:
3. Թեմա՝ «Բռնություն ընտանիքում և ընտանիքից դուրս» վարող սոցիալական աշխատող՝ Անի Զաքարյան:
4. Թեմա՝ «Մտածողության զարգացումը երեխաների մոտ» վարող հոգեբան՝ Արփինե Հայրապետովա:
5. Թեմա՝ «Ավազի կիրառումը լոգոպեդական աշխատանքում» վարող լոգոպեդ՝ Հասմիկ Բաղդասարյան:
6. Թեմա՝ «Դիդակտիկ խաղերի, պարագաների օգտագործման նպատակը և ուղղվածությունը» վարող, հատուկ մանկավարժ՝ Վերոնիկա Հարությունյան:
7. Թեմա՝ «Ոչ վերբալ հաղորդակցում» վարող, հոգեբան՝ Անահիտ Վահրադյան:
8. Թեմա՝ «Սոցիալական հմտություններ և բարկության կառավարում» վարող, սոցիալական աշխատող՝ Անի Զաքարյան:
9. Թեմա՝ «Արտ թերապիան հատուկ կարիք ունեցող երեխաների ինքնադրսևորման միջոց» վարող, հոգեբան՝ Տանյա Աղաբեկյան:
10. Թեմա՝ «Խոսքի ընդհանուր թերզարգացման էթոլոգիան և պաթոգենեզը» վարող, լոգոպեդ՝ Հասմիկ Բաղդասարյան:
11. Թեմա՝ «Շուտասելուկներ, ազդեցությունը խոսքի զարգացման վրա» վարող, լոգոպեդ՝ Ռեգինա Բաբաջանյան:
12. Թեմա՝ «Էուսթրես և դիսթրես», վարող, հոգեբան՝ Վանուհի Գաբրիելյան:
13. Թեմա՝ «Սթրեսի կառավարում, հաղթահարման հմտություններ»: վարող, սոցիալական աշխատող՝ Անի Զաքարյան:
14. Թեմա՝ «Ինչպես վերացնել կամ նվազեցնել երեխայի թքահոսությունը», վարող, լոգոպեդ՝ Ռեգինա Բաբաջանյան:
15. Թեմա՝ «Ալալիայի համառոտ բնութագիրը», վարող, լոգոպեդ՝ Հասմիկ Բաղդասարյան:
16. Թեմա՝ «Երեխաների պատկերացումների և գիտելիքների ամրապնդում», վարող, կենտրոնի լոգոպեդ՝ Վեռոնիկա Հարությունյան:
17. Թեմա՝ «Հուզական ինտելեկտի զարգացում երեխաների և մեծահասակների մոտ», վարող, սոցիալական աշխատող՝ Անի Զաքարյան:
18. Թեմա՝ «Ինչ է հնչյունահնչույթային լսողությունը, այն զարգացնող վարժություններ», վարող, լոգոպեդ՝ Ռեգինա Բաբաջանյան:
19. Թեմա՝ «Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների ընտանեկան դաստիարակությունը», վարող, հոգեբան՝ Տանյա Աղաբեկյան:

**Միջոցառում 7.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 7/ հաշվետու ժամանակահատվածում թվով **49** քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առնչվող, պետական հավաստագրով աջակցող սարքեր և պարագաների ձեռք բերման և այլ խնդիրներին վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 7-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 8**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 8/ կենտրոնի թվով 5 շահառուներ իրենց 7-օրյա ամառային հանգիստ են անցկացրել Ստեփանավանի «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում:

**Միջոցառում 9**. Իրականացվել է գնահատում (ծրագրի 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ ամիսների ավարտին) և գնահատման պատկերը հաստատական դրական է: Իրականացված գնահատման արդյունքում հստակ և պարզ դարձավ, որ Ծրագիրը միանշանակ աջակցում է շահառուներին, այդ են վկայում հարցված շահառուների 90 % մոտ արձանագրված

| |
|---|
| կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճը և գոհունակությունը՝ ստացած ծառայություններից: |

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝**

| |
|---|
| Ստորև ներկայացվում է Ստեփանավանի կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը https://www.facebook.com/groups/738413854220041 |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել: |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար**

1. 23-25.02.–08-10.03.2024թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի աշխատակիցները մասնակցեցին ԷկոՀաք հիմնադրամի, MitOst գերմանական ասոցիացիայի և GIZ-ի կողմից կազմակերպած «Ժողովրդավարական մասնակցության զարգացումը որոշումների կայացման գործընթացքում» դասընթացներին:
2. 16.02.2024թ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի համակարգող ժ/պ Աննա Չոբանյանը մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության Ստեփանավանի տարածքային կենտրոնի հերթական նիստին:
3. 30.05.2024թ-ին կենտրոնի հոգեբան՝ Տանյա Աղաբեկյանը մասնակցել է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնում կազմակերպված «Երեխաների հոգոսոցիալական տոկունության բարձրացում» թեմայով դասընթացին:
4. 03.06.2024 -ին կենտրոնի սոցիալական աշխատող՝ Անի Ջաքարյանը մասնակցել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից կազմակերպված «Գնահատման նոր համակարգերի տեղայնացում» թեմայով դասընթացին:
5. 29.07.2024 թ-ին կենտրոնի հոգեբան՝ Տանյա Աղաբեկյանը մասնակցել է «Արևամանուկ» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Տոկունություն կրթողները» թեմայով դասընթացին:
6. 17.09.2024 թ-ին կենտրոնի սոցիալական աջակցող՝ Հերմինե Առաքելյանը մասնակցել է «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն»-ի կողմից կազմակերպված «Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում» թեմայով դասըթնացին:
7. 06.11.2024թ-ին կենտրոնի հատուկ մանկավարժ՝ Աննա Չոբանյանը մասնակցել է Հանրապետական հոգեբանամանկավարժական կենտրոնի կողմից կազմակերպված՝ «Բուլինգից և բռնությունից ազատ միջավայր» թեմայով դասընթացին:

8. 03.11.2024թ-ին կենտրոնի հոգեբան՝ Տանյա Աղաբեկյանը մասնակցել է «Մանկան և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիա»-ի կողմից կազմակերպված «Երեխաների հոգեբանական աջակցության սկզբունքներ» թեմայով դասընթացին:

Ծրագրի համակարգող՝ Տ.Ղազարյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Ս. Մաղաքյան